C/o FAX 19-10-2016 ԳՐԱՖՈՒՄ 33473 1754

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 1388 19 հոկտեմբերի, 2016 թ.

ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Սիրելիներ,

Ցավով տեղեկացանք մեծանուն գրող, հայոց Ցեղասպանության նահատակ Ռուբեն Սևակի դստեր՝ Շամիրամ Չիլինկիրյան-Սևակի մահվան մասին:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ Մեր ցավակցությունն ու սրտակցությունն ենք բերում հանգուցյալի հարազատներին և բոլոր վշտացյալներին:

Բարեհիշատակ Շամիրամ Սևակի անցած երկրավոր ուղին ներկայացնում է Ցեղասպանության պատճառով որբացյալ հայ մանուկների դժվարին ու տառապալի ճակատագիրը, բայց և ամուր կամքն ու վճռականությունը՝ նեղությունները հաղթահարելու, վեր հառնելու, ապրելու ու բարի գործեր արարելու: Հոգելույս Շամիրամը դեռ փոքրիկ երեխա էր, երբ Եղեռնի արհավիրքների մեջ հայրը բանտարկվեց ու սպանվեց, և նա չկարողացավ ճանաչել իր սիրասուն ծնողին: Բայց Ռուբեն Սևակի հետ հաղորդակից դարձավ նրա արժեքավոր ստեղծագործությունների միջոցով: Մեծանուն հորից ժառանգած հայրենանվիրումի ու ազգասիրության ոգով լուսահոգի Ռուբեն Սևակի մեծազնիվ դուստրը աստվածաշնորհ իր կյանքն ապրեց ազգիս մեծանուն գրողի ժառանգությունը տարածելով: Նրա համար մեծ մխիթարություն են եղել Մայր Հայրենիք այցելությունները և այստեղ Ռուբեն Սևակին նվիրված միջոցառումներին մասնակցությունը: Ջերմությամբ ենք հիշում, որ երեք տարի առաջ Մայր Աթոռում Ռուբեն Սևակի եղբորորդու՝ Հովհաննես Չիլինկիրյանի բարերարությամբ, նրա կողմից արժեքավոր կտավների, Ռուբեն Սևակի հեղինակած նկարների, անձնական իրերի ու փաստաթղթերի, ցուցանմուշների ընծայաբերմամբ տեղի ունեցավ Ռուբեն Սևակի թանգարանի բացումը, որը մեծ խանդավառությամբ և ուրախությամբ էր համակել Շամիրամ Սևակին:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Ամենողորմ Տերը, որ արարչական Իր սիրով երկնային բարձունքներում խաղաղություն և հանգստություն պարգևի հանգուցյալ մեծազնիվ տիկին Շամիրամի լույս հոգուն: Այլև հայցում ենք Սուրբ Հոգու մխիթարությունը ննջեցյալի ընտանյաց անդամներին, հարազատներին և մերձավորներին:

«Յիշեսցէ Տէր զհոգի նորոգ ննջեցելոյն և հանգուսցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ